

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոյանի ուղերձը ՀՀ Սահմանադրության օրվա առթիվ

05.07.2019

Հարգելի հայրենակիցներ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը ոչ միայն մեր երկրի մայր օրենքն է, այլ նաև այն հիմնաքարը, որի շնորհիվ մեր Հանրապետությունը դիմակայում է ներքին ու արտաքին քաղաքական ցնցումներին, ապահովում իր քաղաքացիների իրավունքների պաշտպանությունն ու իրացումը, զարգացման խաղաղ ու կայուն ընթացքը:

Շնորհավորում եմ բոլորիս ՀՀ սահմանադրության օրվա առթիվ, մաղթում խաղաղ ու հզոր հայրենիք, արարչագործ ժամանակներ, նորանոր ձեռքբերումներ:

Լավագույն ցանկություններով՝

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոյան